ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 26.04.2018թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի

թիվ ԳԲԽ-ԱՄ-2018/51

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Միեր Անանյանս, քննելով «Խաչպար» ՍՊԸ-ի կողմից 07.04.2018թ. ներկայացված բողոքը (այսուհետ նաև՝ ԳԲԽ-ԱՄ-2018/51 բողոք) և կից փաստաթղթերը, պարզեցի հետևյալը.

1. **«Խաչպար» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը.**

«Խաչպար» ՍՊԸ-ն (այսուհետ նաև՝ Ընկերություն) Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձին 07.04.2018թ. ներկայացված բողոքով հայտնել է, որ ՀՀ պաշտպանության նախարարության (այսուհետ նաև՝ Պատվիրատու) կարիքների համար «ՀՀ ՊՆՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-9/20» ծածկագրով գնանշման հարցման հանձնաժողովը 2018թ. մարտի 30-ի թիվ 1 որոշմամբ հաստատել է 44 անվանումով, «Վիրաբուժական թելերի» ձեռքբերման նպատակով հայտարարված հրավերը (այսուհետ նաև՝ Ընթացակարգ):

Ընթացակարգի հրավերի պայմանագրին կից թիվ 1 Հավելվածի «Տեխնիկական հատկանիշներ» սյունակներում թիվ 1-16-րդ, 23-26-րդ և 31-44-րդ չափաբաժիններում նշվել է

ասեղի համաձուլվածքի կոնկրետ մետաղների և տոկոսների տվյալներ, մասնավորապես՝ «....համաձուլվածքը համապատասխան տոկոսային հարաբերակցությամբ ունի հետևյալ մետաղական կազմը՝ երկաթ ոչ ավել 73%, քրոմ ոչ պակաս 12%, նիկել ոչ պակաս 10%, մոլիբդեն ոչ պակաս 3%, տիտան և տանտալ ոչ պակաս 2% »:

Ընկերությունը նշել է, որ Ընթացակարգի Հրավերով պահանջվող այդ տվյալները հանդիսանում են «էտալոյ» անվանումով համաձուլվածքի կոնկրետ տվյալները, որոնք ՀՀ պաշտպանության նախարարությունը նշում էր նախորդ տարիներին վիրաբուժական կարանյութերի ձեռքբերման նպատակով հայտարարված հրավերների «Տեխնիկական հատկանիշներ« սյունակներում՝ գրելով «....համաձուլվածքը էտալոյ կամ համարժեք....»:

Ընկերությունը գտնում է, որ գնման առարկաների բնութագրերը նման ձևով կազմելով՝ Պատվիրատուն չիմնավորված խոչընդոտներ է առաջացնում հնարավոր մասնակիցների, այդ թվում նաև՝ «Խաչպար» ՍՊԸ-ի համար, հավասար պայմաններ չի ապահովում հնարավոր մասնակիցների, այդ թվում նաև՝ «Խաչպար» ՍՊԸ-ի համար, չի նպաստում պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնմանը և չի խրախուսում նրանց միջև մրցակցությունը՝ հակասելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետերով, 13-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետերով սահմանված պահանջներին:

«Խաչպար» ՍՊԸ-ն ներկայացված բողոքով խնդրել է հետևյալը.

<պարտավորեցնել <<ՀՀ ՊՆՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-9/20>> ծածկագրով գնանշման հարցման գնահատող հանձնաժողովին ընդունելու գնանշման հարցման ընթացակարգը չկայացած հայտարարելու մասին որոշում՝ հրավերի թիվ 1-16-րդ, 23-26-րդ և 31-44-րդ չափաբաժինների մասով և փոփոխելու հրավերի թիվ 1-16-րդ, 23-26-րդ և 31-44-րդ չափաբաժինների <<Տեխնիկական հատկանիշներ>> սյունակներում առկա պահանջները՝ այնտեղից հեռացնելով ներառված կոնկրետ արտադրողի՝ կոնկրետ առևտրային նշանին հղումներ պարունակող, բրենդային անվանումներ ունեցող վիրաբուժական կարանյութերի ասեղների կազմը նույնականացնող՝ կոնկրետ մետաղների և տոկոսների տվյալները, որոնք խտրական են, չիմնավորված խոչընդոտներ առաջացնում գնումների գործընթացում մրցակցության համար, հավասար պայմաններ չեն ապահովում հնարավոր բոլոր մասնակիցների, այդ թվում նաև՝ <<Խաչպար>> ՍՊԸ-ի համար, չեն նպաստում

պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնմանը և նրանց միջև մրցակցության խրախուսմանը:

Ընկերության կողմից որպես բողոքի փաստացի և իրավական հիմքեր, ապացույցներ նշվել է հետևյալը.

Ընթացակարգի հրավերի թիվ 1-16-րդ, 23-26-րդ և 31-44-րդ չափաբաժինների մասով ձեռքբերվող վիրաբուժական կարանյութերի ասեղների կազմը նույնականացնող՝ կոնկրետ մետաղների և տոկոսների պահանջները հանդիսանում են <<էտալոն>> անվանումով համաձուլվածքը նույնականացնող տվյալներ, որոնք տարբերվում են այլ արտադրողների համարժեք վիրաբուժական կարանյութերի ասեղների կազմի մեջ մտնող կոնկրետ մետաղներից և տոկոսներից:

<<ՀՀ ՊՆՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-9/20>> ծածկագրով գնանշման հարցման հրավերի թիվ 1-16-րդ, 23-26-րդ և 31-44-րդ չափաբաժինների մասով գնման առարկաների բնութագրերը նման ձևով կազմելով՝ Պատվիրատուն թույլ է տվել <<Գնումների մասին>> ՀՀ Օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետերով և 13-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետերով սահմանված պահանջների խախտումներ:

Ընկերությունը ի լրումն բողոքի 07.04.2018թ. գրությամբ հայտնել է, որ ներկայացնում է վիրաբուժական կարանյութեր արտադրող տարբեր ֆիրմաների ասեղների որակական սերտիֆիկատները, այդ սերտիֆիկատներում առկա ասեղների համաձուլվածքների կազմի մեջ մտնող բաղադրչների անվանումների և նրանց տոկոսային պարունակությունը ցույց տվող թվերի, ինչպես նաև <<ՀՀ ՊՆՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-9/20>> ծածկագրով գնանշման հարցման հրավերի պայմանագրին կից թիվ 1 հավելվածի <<Տեխնիկական հատկանիշներ>> սյունակներում ներառված ասեղի համաձուլվածքի կազմի մեջ մտնող կոնկրետ մետաղների և նրանց տոկոսային պարունակության թույլատրելի տվյալների թվերի հիման վրա կազմված համեմատական աղյուսակը:

Ընկերությունը հայտնել է, որ վերը նշված համեմատական աղյուսակի <<Հատկությունները>> սյունակում ներառված արտահայտությունները վերցված են ՀՀ պաշտպանության նախարարության կողմից ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին տրամադրված 19.12.17թ. թիվ 19/2793 գրության մեջ նշված կայքերի տվյալների հիման վրա:

Ընկերությունը նշել է, որ համեմատական աղյուսակից ակնհայտ երևում է, որ Ընթացակարգի հրավերի պայմանագրին կից թիվ 1 հավելվածի <<Տեխնիկական հատկանիշներ>> սյունակներում թիվ 1-16-րդ, 23-26-րդ և 31-44-րդ չափաբաժինների մասով ձեռքբերվող վիրաբուժական կարանյութերի ասեղների կոնկրետ մետաղների և տոկոսների պահանջները տարբերվում են այլ արտադրողների համարժեք վիրաբուժական կարանյութերի ասեղների կազմի մեջ մտնող մետաղների տոկոսներից, ինչը չհիմնավորված խոչընդոտներ է առաջացնում հնարավոր մասնակիցների, այդ թվում նաև՝ <<Խաչպար>> ՍՊԸ-ի համար, հավասար պայմաններ չի ապահովում հնարավոր մասնակիցների, այդ թվում նաև՝ <<Խաչպար>> ՍՊԸ-ի համար, չի նպաստում պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնմանը և չի խրախուսում նրանց միջև մրցակցությունը՝ հակասելով <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետերով, 13-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետերով սահմանված պահանջներին:

Ամփոփելով վերոգրյալը, <<Խաչպար>> ՍՊԸ-ն հայտնել է, որ վերաձևակերպում է 07.04.2018թ. բողոքով ներկայացված պահանջը հետևյալ ձևով.

<<պարտավորեցնել <<ՀՀ ՊՆՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-9/20>> ծածկագրով գնանշման հարցման գնահատող հանձնաժողովին ընդունելու գնանշման հարցման ընթացակարգը չկայացած հայտարարելու մասին որոշում՝ հրավերի թիվ 1-16-րդ, 23-26-րդ և 31-44-րդ չափաբաժինների մասով և փոփոխելու հրավերի թիվ 1-16-րդ, 23-26-րդ և 31-44-րդ չափաբաժինների <<Տեխնիկական հատկանիշներ>> սյունակներում առկա պահանջները՝ այնտեղից հեռացնելով ներառված կոնկրետ մետաղների և տոկոսների տվյալները, որոնք խտրական են, չհիմնավորված խոչընդոտներ են առաջացնում գնումների գործընթացում մրցակցության համար, հավասար պայմաններ չեն ապահովում հնարավոր բոլոր մասնակիցների, այդ թվում նաև՝ <<Խաչպար>> ՍՊԸ-ի համար, չեն նպաստում պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնմանը և նրանց միջև մրցակցության խրախուսմանը:

Ընկերությունը ի լրումն բողոքի 25.04.2018թ գրությամբ հայտնել է, որ Պատվիրատուն <<ՀՀ ՊՆՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-9/20>> ծածկագրով գնանշման հարցման հրավերի թիվ 1-16-րդ, 23-26-րդ և 31-44-րդ չափաբաժինների մասով տեխնիկական բնութագրի պահանջում կոնկրետ մետաղների տոկոսների մոտ գրելով <<....ոչ ավել....>> կամ <<....ոչ պակաս....>>

բառերը փորձել է միայն քողարկել իր ցանկությունը՝ կոնկրետ արտադրողի կոնկրետ արտադրանքը ձեռքբերելու համար:

Ընկերությունը նշել է, որ վերը նշված գրությամբ ներկայացված համեմատական աղյուսակի տվյալները վերցված են Պատվիրատուի 2018թ. մարտի 30-ի <<ՀՀ ՊՆՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-9/20>> ծածկագրով գնանշման հարցման հրավերից, 2017թ. մարտի 21-ի «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/16- ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-9/16» ծածկագրով մրցույթի հրավերից, ինչպես նաև 2017թ. նոյեմբերին կազմված և տարբեր մատակարարներին՝ այդ թվում նաև <<Խաչպար>> ՍՊԸ-ին, քննարկման և առաջարկներ ներկայացնելու համար տրամադրված վիրաբուժական կարանյութերի տեխնիկական բնութագրերում առկա կոնկրետ մետաղների և նրանց կոնկրետ տոկոսների տվյալներից:

Աղյուսակում առկա մետաղների անվանումներն ու նրանց տոկոսները բացարձակապես նույնն են, դրանք չեն համընկնում կամ մասնակի են համընկնում այլ արտադրողների համաձուլվածքների մետաղների և նրանց տոկոսների հետ, ինչը չհիմնավորված խոչընդոտներ է առաջացնում հնարավոր մասնակիցների, այդ թվում նաև՝ <<Խաչպար>> ՍՊԸ-ի համար:

«Խաչպար» ՍՊԸ-ն, պատշաճ ծանուցված լինելով բողոքի քննության նպատակով 10.04.2018թ. ժամը 11:35-ին հավիրված նիստի վերաբերյալ, տնօրենը ապահովել է իր մասնակցությունը, ով պնդել է բողոքով ներկայացված դիրքորոշումը:

2. <u>ՀՀ պաշտպանության նախարարության կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստերը, հիմնավորումները և դիրքորոշումը.</u>

ՀՀ պաշտպանության նախարարությունը 19.04.2018թ. թիվ ԴՎԱ/1360 գրությամբ հայտնել է հետևյալը.

«Վիրաբուժական կարանյութերի ասեղները կազմում են կարանյութի անբաժան մասը և նրա որակական հատկություններն ուղղակիորեն անդրադառնում են ամբողջական կարանյութի որակին: Ասեղների որակը մեծապես կախված է համաձուլվածքում առկա մետաղների տեսակներից և համաձուլվածքում վերջիններիս չափաքանակներից, ուստի վիրաբուժական բարդ միջամտությունների համար անհրաժեշտ կարանյութերի

տեխնիկական բնութագրերում համաձուլվածքին վերաբերվող պահանջները ներառվել են միայն որակյալ կարանյութեր ձեռք բերելու անհրաժեշտությունից ելնելով, միաժամանակ՝ մրցույթի հրավերով տվյալ պահանջը չներառելը մասնակիցներին հնարավորություն կընձեռներ ՀՀ պաշտպանության նախարարությանն առաջարկել այնպիսի կարանյութեր, որոնց ասեղը շուտ է բթանում և դրանք կայուն չեն անդառնալի դեֆորմացիայի հանդեպ՝ ասեղնաբռնիչով աշխատելիս, իսկ նշված դեպքերում վիրաբուժական կարանյութն անհնար է օգտագործել ամբողջությամբ և անհրաժեշտություն է առաջանում վիրահատության ժամանակ փոխել կարանյութը, որը բացի ֆինանսական լրացուցիչ ծախսերից բերում է նաև վիրահատության ժամանակի ավելացման, հյուսվածքների լրացուցիչ տրավմատիզացիայի և հետվիրահատական շրջանի երկարացման:

Վիրաբուժական կարանյութերի տեխնիկական բնութագրերում կարանյութերի ասեղների նման համաձուլվածք սահմանելու համար հիմք են հանդիսացել ՀՀ ՋՈՒ ռազմաբժշկական հաստատությունների կողմից իրականացվող վիրահատությունների յուրահատկություններն (պատերազմական իրավիճակներում հանդիպող վնասվածքների սպեցիֆիկությունը) ու բազմամյա հարուստ փորձը: Բացի այդ ուսումնասիրվել են բազմաթիվ գիտական հետազոտությունների արդյունքները, հաշվի են առնվել համաշխարհային և հայաստանյան առաջադեմ կլինիկաների փորձը և եզրակացությունները, ինչպես նաև ԱՄՆ Վիրջինիա նահանգի մեխանիկայի և տիեզերական տեխնոլոգիաների ֆակուլտետի և վիրաբուժական համալսարանի համատեղ ուսումնասիրությունները՝ վիրաբուժական կարանյութերի ասեղների վերաբերյալ: Բացի այդ, մրցույթի հրավերի տեխնիկական բնութագրով մետաղների չափաքանակները սահմանվել են որոշակի միջակայքով, այլ ոչ՝ հաստատուն մեծություններով, ինչը մասնակիցներին հնարավորություն է տալիս ՀՀ պաշտպանության նախարարությանն առաջարկել ոչ թե սահմանափակ այլ որակյալ ասեղներով կարանյութերի առավելագույնս լայն տեսականի:

Ստորև ներկայացված է վիրաբուժական կարանյութերի ասեղների համաձուլվածքում նշված մետաղական կազմի բաղկացուցիչների նշանակությունը համաձուլվածքում՝

Համաձուլվածքում առկա նյութի անվանումը	%	Ընդունելի սահմանաչափ	Նյութի առկայության արդյունքը՝ ասեղի որակական հատկանիշների վրա

Երկաթ	73	ոչ ավել	Հանդիսանում է կապակցող նյութ և նախատեսված մնացորդային ծավալը վերականգնելու համար: Նշվածից ավել քանակությունը նվազեցնում է համաձուլվածքի կայունությունը կոռոզիայի հանդեպ
Քրոմ	12	ոչ պակաս	Նպաստում է կոռոզիակայունությանը և ամրությանը
Նիկել	10	ոչ պակաս	Նպաստում է կոռոզիակայունությանը և ամրությանը: Համաձուլվածքը դառնում է մարտենսիտ
Մոլիբդեն	3	ոչ պակաս	Նպաստում է առաձգականությանը, ձգման նկատմամբ ամրությանը: Համաձուլվածքը դառնում է մարտենսիտ
Տիտան, Տանտալ	2	ոչ պակաս	Տիտանը- ամրություն, խտություն, կոռոզիակայունություն:
			Տանտալը - կտրող եզրերի սրություն

Ամփոփելով վերոգրյալը Պատվիրատուն հատնել է, որ վիրաբուժական կարանյութեր արտադրող բոլոր կազմակերպությունները՝ պահանջարկից կախված, կարող են նույն կարանյութը արտադրել որակական էապես տարբերվող և տարբեր մետաղական կազմ ունեցող համաձուլվածքներից կազմված ասեղներով, ինչն էլ իր հերթին հանգեցնում է կարանյութերի գների էական տարբերության և ըստ էության տվյալ պարագայում հնարավոր չէ կարանյութերի գների էական տարբերության դեպքում ստանալ որակական միևնույն ցուցանիշները:

Պատվիրատուն նշել է նաև, որ հրավերով սահմանված տեխնիկական բնութագրին համապատասխան ասեղներով կարանյութեր արտադրում են համաշխարհային ճանաչված այնպիսի կազմակերպություններ, ինչպիսիք են - Johnson & Johnson, CP medical, Covidien, Demetech և այլ ընկերություններ: Վերջիններիս կողմից արտադրված վիրաբուժական կարանյութերը << ներմուծվում են տեղական բազմաթիվ կազմակերպությունների կողմից, ինչն էլ իր հերթին ապահովում է մրցակցության բարձր մակարդակ, հետևաբար՝

տեխնիկական բնութագրերը նման բովանդակությամբ հրապարակելն ունի բացառապես որակյալ արտադրանք ձեռք բերելու նպատակ:

ՀՀ պաշտպանության նախարարությունը, պատշաճ ծանուցված լինելով բողոքի քննության նպատակով 10.04.2018թ. ժամը 11:35-ին հավիրված նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցչի մասնակցությունը, ով պնդել է վերոհիշյալ գրությամբ ներկայացված դիրքորոշումը:

3. ԳԲԽ-ԱՄ-2018/51 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը

ԳԲԽ-ԱՄ-2018/51 բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. ՀՀ պաշտպանության նախարարության կողմից ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար վիրաբուժական թելերի ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ՀՀՊՆՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-9/20» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ:

2. Ընթացակարգի հրավերի թիվ 1-16-րդ, 23-26-րդ և 31-44-րդ չափաբաժինների գնման ենթակա ապրանքների տեխնիկական բնութագրերով սահմանվել են, որ համապատասխան տոկոսային հարաբերակցությամբ համաձուլվածքն ունի հետևյալ մետաղական կազմը՝ երկաթ ոչ ավել 73%, քրոմ ոչ պակաս 12%, նիկել ոչ պակաս 10%, մոլիբդեն ոչ պակաս 3%, տիտան և տանտալ ոչ պակաս 2%:

4. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Միհր Անանյանս, ուսումնասիրելով «Խաչպար» ՍՊԸ-ի 07.04.2018թ. բողոքը, ի լրումն բողոքի 13.04.2018թ. և 25.04.2018թ. գրությունները՝ կից փաստաթղթերով, և ՀՀ պաշտպանության նախարարության 19.04.2018թ. թիվ ԴՎԱ/1360 գրությունը, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» << օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում.

3) ցանկացած անձի համար, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարություն:

Օրենքի 13-րդ հոդվածի 1-5-րդ մասերի համաձայն՝

1. Գնման առարկայի բնութագրերը պետք է ամբողջությամբ և հստակ նկարագրեն ձեռք բերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության հատկանիշները, դրանց ձեռքբերման և վճարման պայմանները՝ բացառելով տարակերպ մեկնաբանությունը: Գնման առարկայի բնութագրերը, որոնք ներառում են նաև պայմանագրի գինը, ընդգրկվում են պայմանագրում:

2. Գնման առարկայի բնութագրերը՝

1) պետք է մրցակցության հավասար պայմաններ ապահովեն հնարավոր մասնակիցների համար.

2) չպետք է հանգեցնեն գնումների գործընթացում մրցակցության համար չհիմնավորված խոչընդոտների առաջացմանը.

3) պետք է լինեն օբյեկտիվորեն հիմնավորված և համարժեք լինեն այն կարիքին, որի բավարարման նպատակով կատարվում է տվյալ գնումը.

4) ներառում են գնման առարկայի մասնագրի, տեխնիկական տվյալների, իսկ աշխատանքների դեպքում՝ նաև աշխատանքների ծավալաթերթի, ժամանակացույցի և այլ ոչ գնային պայմանների ամբողջական և համարժեք նկարագրությունը:

3. Ելնելով գնման առարկայի առանձնահատկությունից՝ դրանց հատկանիշները հնարավորինս ներառում են ձեռք բերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության որակին, ստանդարտին, անվտանգությանը, պայմանական նշաններին, տերմինաբանությանը, փաթեթավորմանը, բեռնաթափմանը, չափին, նախագծերին, ինչպես նաև գնման

առարկայի այլ հատկանիշներին վերաբերող պայմանների հստակ նկարագրությունը՝ հիմնված միջազգային ստանդարտների և Հայաստանի Հանրապետությունում գործող նորմատիվատեխնիկական փաստաթղթերի, ստանդարտների, իսկ դրանց բացակայության դեպքում՝ ժամանակավոր տեխնիկական պայմանների վրա:

4. Գնման առարկայի հատկանիշները կարող են սահմանվել նաև որպես կատարողականի կամ գործառութային (ֆունկցիոնալ) նկարագրեր, որոնք պետք է ներկայացվեն բավարար ճշտությամբ՝ հնարավորություն տալով մասնակիցներին և պատվիրատուին ճշգրիտ ընկալել պայմանագրի առարկան:

5. Գնման առարկայի հատկանիշները չպետք է պահանջ կամ հղում պարունակեն որևէ առևտրային նշանի, ֆիրմային անվանմանը, արտոնագրին, էսքիզին կամ մոդելին, ծագման երկրին կամ կոնկրետ աղբյուրին կամ արտադրողին, բացառությամբ այն դեպքերի, երբ անհնար է գնման առարկայի բնութագրումն առանց դրանց: Հղումներ օգտագործելու դեպքում հատկանիշների բնութագիրը պետք է պարունակի «կամ համարժեք» բառերը:

ՀՀ պաշտպանության նախարարության կողմից ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար վիրաբուժական թելերի ձեռքբերման նպատակով հայտարարվել է «*ՀՀՊՆՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-9/20*» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ:

Ընթացակարգի հրավերի թիվ 1-16-րդ, 23-26-րդ և 31-44-րդ չափաբաժինների գնման ենթակա ապրանքների տեխնիկական բնութագրերով սահմանվել են, որ համաձուլվածքն ունի հետևյալ մետաղական կազմը՝ ***երկաթ ոչ ավել 73%, քրոմ ոչ պակաս 12%, նիկել ոչ պակաս 10%, մոլիբդեն ոչ պակաս 3%, տիտան և տանտալ ոչ պակաս 2%:***

«*Խաչպար*» ՍՊԸ-ն ներկայացված բողոքով նշել է, որ Ընթացակարգի հրավերի թիվ 1-16-րդ, 23-26-րդ և 31-44-րդ չափաբաժինների գնման ենթակա ապրանքների տեխնիկական բնութագրերով սահմանված մետաղների և տոկոսների պահանջները հանդիսանում են «էտալոն» անվանումով համաձուլվածքը նույնականացնող տվյալներ, որոնք տարբերվում են այլ արտադրողների համարժեք վիրաբուժական կարանյութերի ասեղների կազմի մեջ մտնող կոնկրետ մետաղներից և տոկոսներից, ուստի Պատվիրատուն նման ձևով կազմելով տեխնիկական բնութագրերը չհիմնավորված խոչընդոտներ է առաջացնում հնարավոր մասնակիցների, այդ թվում նաև՝ «*Խաչպար*» ՍՊԸ-ի համար, հավասար պայմաններ չի ապահովում հնարավոր մասնակիցների, այդ թվում նաև՝ «*Խաչպար*» ՍՊԸ-ի համար, չի

նպաստում պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնմանը և չի խրախուսում նրանց միջև մրցակցությունը:

Պատվիրատուն 19.04.2018թ. թիվ ԴՎԱ/1360 գրությամբ հատնել է, որ վիրաբուժական կարանյութեր արտադրող բոլոր կազմակերպությունները՝ պահանջարկից կախված, կարող են նույն կարանյութը արտադրել որակական էապես տարբերվող և տարբեր մետաղական կազմ ունեցող համաձուլվածքներից կազմված ասեղներով, ինչն էլ իր հերթին հանգեցնում է կարանյութերի գների էական տարբերության և ըստ էության տվյալ պարագայում հնարավոր չէ կարանյութերի գների էական տարբերության դեպքում ստանալ որակական միևնույն ցուցանիշները:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 5-րդ մասը սահմանում է, որ գնման առարկայի հատկանիշները չպետք է պահանջ կամ հղում պարունակեն որևէ առևտրային նշանի, ֆիրմային անվանմանը, արտոնագրին, էսքիզին կամ մոդելին, ծագման երկրին կամ կոնկրետ աղբյուրին կամ արտադրողին, բացառությամբ այն դեպքերի, երբ անհնար է գնման առարկայի բնութագրումն առանց դրանց: Հղումներ օգտագործելու դեպքում հատկանիշների բնութագիրը պետք է պարունակի «կամ համարժեք» բառերը:

Օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնման առարկայի բնութագրերը՝

1) պետք է մրցակցության հավասար պայմաններ ապահովեն հնարավոր մասնակիցների համար.

2) չպետք է հանգեցնեն գնումների գործընթացում մրցակցության համար չհիմնավորված խոչընդոտների առաջացմանը.

3) ***պետք է լինեն օբյեկտիվորեն հիմնավորված և համարժեք լինեն այն կարիքին, որի բավարարման նպատակով կատարվում է տվյալ գնումը***.

Այսպիսով, արձանագրում եմ, որ Ընթացակարգի հրավերի թիվ 1-16-րդ, 23-26-րդ և 31-44-րդ չափաբաժինների գնման ենթակա ապրանքների հատկանիշները չեն պարունակում որևէ հղում Օրենքի 13-րդ հոդվածի 5-րդ մասով նախատեսված որևէ առևտրային նշանին, ֆիրմային անվանմանը, արտոնագրին, էսքիզին կամ մոդելին, ծագման երկրին կամ կոնկրետ աղբյուրին կամ արտադրողին, այլ ընդամենը սահմանվել են գնման առարկայի այն ընդհանուր հատկանիշները, որոնցով օժտված առարկան, ըստ Պատվիրատուի, համարվում է իր կարիքին համարժեք:

Միևնույն ժամանակ անհրաժեշտ է նշել նաև, որ գնումը պետք է լինի տնտեսող, արդյունավետ և օգտավետ: Տվյալ դեպքում գտնում եմ, որ թիվ 1-16-րդ, 23-26-րդ և 31-44-րդ չափաբաժինների տեխնիկական բնութագրով սահմանված գնման առարկաների տեխնիկական նկարագրերը օբյեկտիվորեն հիմնավորված են և համարժեք առկա կարիքին, որը հանգեցնում է օգտավետ գնման, ինչպես նաև հրավերի տեխնիկական բնութագիրը՝ գնման առարկաների մասով հստակ ձևով արտացոլում են Պատվիրատուի այն կարիքը, որի բավարարման նպատակով կատարվում է տվյալ գնումը:

Ելնելով վերոգրյալից, գտնում եմ, որ Ընթացակարգի հրավերի թիվ 1-16-րդ, 23-26-րդ և 31-44-րդ չափաբաժինների գնման ենթակա ապրանքների տեխնիկական բնութագրերը կազմված են գնումների մասին ՀՀ օրենսդրության պահանջներին համապատասխան, ուստի նման պայմաններում «Խաչպար» ՍՊԸ-ի կողմից ներկայացված բողոքն անհիմն է և ենթակա է մերժման:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

«Խաչպար» ՍՊԸ-ի կողմից 07.04.2018թ. ներկայացված բողոքը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով:

Գնումների հետ կապված
բողոքներ քննող անձ՝ ՄՀԵՐ ԱՆԱՆՅԱՆ